ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների /Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Արաբկիր նստավայրի՝ ք. Երևան, Հրաչյա Ներսիսյան 10 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների/ ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/06» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի հոկտեմբերի 4-ին կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/06» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2023 թվականի դեկտեմբերի 22-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունները պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Չգերազանցելով Պայմանագրի ընդհանուր գնի տասը տոկոսը՝ ավելացվել են Պայմանագրով նախատեսված աշխատանքների ծավալները:

Փոփոխության նկարագրություն՝

- Պայմանագրի 5.1 կետում «19 299 600 (տասնինը միլիոն երկու հարյուր իննսունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, որից 3 216 600 (երեք միլիոն երկու հարյուր տասնվեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն» բառերը փոխարինվել են «21 220 145,22 (քսանմեկ միլիոն երկու հարյուր քսան հազար հարյուր քառասունհինգ դրամ քսաներկու լումա) ՀՀ դրամ, որից 4 244 029,04 (չորս միլիոն երկու հարյուր քառասունչորս հազար քսանինը դրամ չորս լումա) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն» բառերով,
- Պայմանագրով նախատեսված աշխատանքների լրացուցիչ ծավալների մասով՝ Պայմանագրի «ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ» վերտառությամբ հավելված N 1-ը լրացվել է,
- Պայմանագրի՝ 07.11.2023թ. կնքված N 1 համաձայնագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 1-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 կետ

Պատվիրատու՝ Դատական դեպարտամենտ

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

### 04.10.2023թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/06» ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «22» դեկտեմբերի 2023թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԲԵՍԹ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Նաջարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 04.10.2023թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/06» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Չգերազանցելով Պայմանագրի ընդհանուր գնի տասը տոկոսը՝ ավելացնել Պայմանագրով նախատեսված աշխատանքների ծավալները՝ 1 920 545,22 (մեկ միլիոն ինը հարյուր քսան հազար հինգ հարյուր քառասունհինգ դրամ քսաներկու լումա) ՀՀ դրամ գումարով, ինչով պայմանավորված.

1.1 Պայմանագրի 5.1 կետում «19 299 600 (տասնինը միլիոն երկու հարյուր իննսունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, որից 3 216 600 (երեք միլիոն երկու հարյուր տասնվեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն» բառերը փոխարինել «21 220 145,22 (քսանմեկ միլիոն երկու հարյուր քսան հազար հարյուր քառասունհինգ դրամ քսաներկու լումա) ՀՀ դրամ, որից 4 244 029,04 (չորս միլիոն երկու հարյուր քառասունչորս հազար քսանինը դրամ չորս լումա) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն» բառերով,

1.2. Պայմանագրով նախատեսված աշխատանքների լրացուցիչ ծավալների մասով՝ Պայմանագրի «ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ» վերտառությամբ հավելված N 1-ը լրացնել՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի,

1.3. Պայմանագրի՝ 07.11.2023թ. կնքված N 1 համաձայնագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 1-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 2-ի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիր կնքելը 01.12.2023թ.-ից Կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև Համաձայնագիր կնքելը Կապալառուի կողմից կատարված աշխատանքների (լրացուցիչ ծավալների) դիմաց վճարումն իրականացվում է Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.3. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Համաձայնագիրը կազմված է 4 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը և հավելված N 2-ը հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ***Դատական դեպարտամենտ*** | ***«ԲԵՍԹ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1 | Հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Լանջաղբյուր, Դպրոցականների 4 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 00494183 |
| Հ/Հ՝ 900011192151 | Հ/Հ՝ 220083335582000 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ակբա Բանկ» ԲԲԸ «Գեղարքունիք» մ/ճ |
| **Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան** | **Տնօրեն՝ Ն. Նաջարյան** |
| ---------------------------- | ---------------------------- |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

«ԲԵՍԹ ՊԼՅՈՒՍ» "БЕСТ ПЛЮС" "BEST PLUS" 00494183

Հավելված N 1
« 22 » դեկտեմբերի 2023թ. կնքված N 2 համաձայնագրի

(Հավելված N 1
« 04 » հոկտեմբերի 2023թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/06» ծածկագրով պայմանագրի)

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

## ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ /ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐԻ՝ Ք. ԵՐԵՎԱՆ, ՀՐԱՉՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ 10 ՀԱՍՑԵՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ/ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

**$Գ_{աշխ}$=2,1973**
**$Գ_{մեք}$=3,0026**
**$Գ_{նյութ}$=1, 1323**

| Հ/հ | Հիմնավորում | Աշխատանքների անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի արժեքը /ՀՀ դրամ/ | Ընդամենը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | | | | | |
| 1 | 46-124 | Փայտե դռների ապամոնտաժում շեպերի քանդումով (7 հատ) | մ² | 13,23 | 1384,11 | **18311,78** |
| 2 | P7-8 | Փայտե դռների տեղադրում | հատ | 7,00 | 62000,00 | **434000,00** |
| 3 | 18-122 կիրառ. | Ալյումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում | էկմ | 10,20 | 774,51 | **7900,00** |
| 4 | ինֆոր. տեղեկ. | Ալյումինե ջեռուցման մարտկոցներ | սեկց | 80,00 | 4440,00 | **355200,00** |
| 5 | 16-261 | Պոլիպրոպիլենային խողովակ փորձարկումով, ալյումինե շերտով d=20x2,8 | մ | 30,00 | 3113,52 | **93405,60** |
| 6 | 16-134 | Փական d=20x2,8 | հատ | 18,00 | 3966,61 | **71398,98** |
| 7 | ինֆոր. տեղեկ. | Պոլիպրոպիլենային ձևավոր մասեր | հատ | 86,00 | 387,26 | **33304,36** |
| 8 | 11-191 | Լամինատե հատակների կառուցում, արտասահմանյան սպունգով | մ² | 42,00 | 5097,02 | **214074,84** |
| 9 | 5-43 | Պլաստմասե շրիշակներ | մ² | 36,00 | 1250,00 | **45000,00** |
| **Ընդամենը** | | | | | | **1272595,56** |
| *Վերադիր ծախսեր (13,3%)* | | | | | | 169255,21 |
| **Ընդամենը** | | | | | | **1441850,77** |
| *Շահույթ (11%)* | | | | | | 158603,58 |
| **Ընդամենը** | | | | | | **1600454,35** |
| *ԱԱՀ (20%)* | | | | | | 320090,87 |
| **Ընդամենը** | | | | | | **1920545,22** |

Կապալառուն աշխատանքները կատարում է **ք. Երևան, Հրաչյա Ներսիսյան 10 հասցեում**:

*Անհրաժեշտության դեպքում, պատվիրատուի պահանջով, ծավալաթերթ-նախահաշվով չնախատեսված, սակայն փաստացի կատարված աշխատանքի արժեքը հաշվարկվում է ՀՀ կառավարության 23.06.2011թ. N 879-Ն որոշմամբ հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման» կարգով և փոխհատուցվում է հետևյալ գործակցի կիրառմամբ՝*

*Գ=ՄԳ/ԳԳ, որտեղ՝*

*ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած գինն է,*

*ԳԳ-ն գնման գինն է:*

*Ընդ որում՝ օգտագործված նյութերի, պատրաստվածքների գները փոխհատուցվում են 04.10.2016թ. ՀՀ Հարկային օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ ծախսը հիմնավորող փաստաթղթերը պատվիրատուին ներկայացնելու դեպքում:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

**Ղեկավարի պարտականությունները**
**կատարող՝ Ն. Գալստյան**

---------------------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
***«ԲԵՍԹ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ***
Հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
գ. Լանջաղբյուր, Դպրոցականների 4
ՀՎՀՀ՝ 00494183
Հ/Հ՝ 220083335582000
«Ակբա Բանկ» ԲԲԸ «Գեղարքունիք» մ/ճ

**Տնօրեն՝ Ն. Նաջարյան**

---------------------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 22 » դեկտեմբերի 2023թ. կնքված N 2 համաձայնագրի

(Հավելված N 1
« 07 » « 11 » 2023թ. կնքված N 1 համաձայնագրի)

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45461100/506 | շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Արաբկիր նստավայրի՝ ք. Երևան, Հրաչյա Ներսիսյան 10 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ/ | | | | | | | | | | | | 1920545,22 | 1 920 545,22 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

**Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան**

-----------------------------------------
/ստորագրություն/

Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
***«ԲԵՍԹ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ***
Հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
գ. Լանջաղբյուր, Դպրոցականների 4
ՀՎՀՀ՝ 00494183
Հ/Հ՝ 220083335582000

«Ակբա Բանկ» ԲԲԸ «Գեղարքունիք» մ/ճ

**Տնօրեն՝ Ն. Նաջարյան**

-----------------------------------------
/ստորագրություն/

Կ.Տ.